

նոր տուժարի, ճամբայ պիտի ելլէ թերեւտէն Նո- վարա կոչուած աւստրիական շոգեշարժ ֆոէկաթով: Ի պատիւ նորընտիր վեհապետին, երկու գաղղիացի և երկու անգլիացի պատերազմական նաւեր ուղեկից պիտի ըլլան յիշեալ ֆոէկաթին մինչև Սէքսքիքս:

Իտալիոյ թղթակցութիւնները և լրագրները կը շարունակեն միշտ արձանագրելու պատերազմական բազմաթիւ պատրաստութիւնները, որ ի դորձ կը դրուին յիշեալ թերակղզւոյն մէջ: Կըսուի նաև թէ Ֆորթուկալի թագաւորը, որ Վիքթոր-Լամանուէ- լին փեսան է, առաջարկեր է տասը հազար հոգիէ բաղկացեալ զօրաբաժին մի յուղարկել, որ հարկը պահանջած ժամանակը՝ իտալական զօրաբանակին հետ պատերազմի ընդգէմ թշնամւոյն: Բայց այս լուրը հաստատութեան կարօտ է. քանզի Փարիզի Օբիինոն Վասիօնալ լրագիրը սուս կը հանէ զայն:

Իտալիոյ ազգային ընկերութիւնը պատուական ուղերձ մի գրելով, յատուկ պատգամաւորութեամբ մի յուղարկեց ի Փարիզ և յանձնեց զայն: Վաթէնոն կայսեր, Լաւառընի նպատակն է իտալացի ազ- գին սրտմտութիւնը և սաստիկ տխրութիւնը յայտ- նել վերջին դաւակցութեանը համար, որ եղաւ իտալացի շարագործներէ ընդգէմ կենաց Գաղղիոյ վեհապետին:

Վաթէնոն Երրորդ այսպէս պատասխանեց.

«Զեր ուղերձը խորին և սրտառուց տպաւորութիւն մի բռնաւ իմ վրաս և շնորհակալ եմ վասն զգացմանցը զոր կը յայտնէք ինձ ի մասին վերջին դաւակցութեան:

«Այս սրբաբաղդ մէջցոյց տուած ձեր սրտմտութիւնը կապալուցանէ ինձ այն բանը՝ որուն վերայ երբեք տա- րակցիչ չունեցայ, այսինքն թէ իտալական կրօնքի իրեւ անարժան իրեն վերաբերելու, այն ոճրագործ մարդիկը որոնք կը յանդգնին իրենց վրայ առնելու վերջին պաշ- տօնը դատաւոր և դաշին ըլլալու:

«Հաւատարմութիւնք թէ այս օրինակ փորձերը չեն կրնար բնաւ փոխել ձեր հայրենեաց վերայ ունեցած գգացմանը, քան և միշտ պատիւ պիտի համարիմ անձինս որ դո- ծակից եղալ հաստատելու իտալիոյ անկախութիւնը:

Լամբիլայի պատերազմին լուրերը մեծ կարեւորու- թիւն չունին: Հիւսիսային Միացեալ Վահանգաց զօրաբանակը՝ ինչպէս նաև հարաւային զօրաբանա- կը գրեթէ հաւասար զօրութեամբ իրարու դէմկրմա- քանին, առանց որոշիչ պատերազմի մի ըլլալու:

Հիւսիսային նահանգաց եկամտից խորհրդոյն մասնաժողովը իւր յայտագրութեանը մէջ որոշեց թէ հարկ է որ 200 միլիոն թաւելոյ փոխառութիւն մի ըլլայ ի պէտս պատերազմական ծախսի:

Լաւ համազգային ցաւալի պատերազմին շուտով

Այս արամադրութեանց ուժովը եկեղեցիներու մի- րեկիցիոյն ըստած բանը վերցուած է Հայոց ազգէն:

Կ. Պոլսոյ և շրջակայի մէջ՝ ազգային ոճ և է շինու- թեանց կամ վերանորոգութեանց չկրնար ձեռնարկուիլ առանց զիտութեան տնտեսական խորհրդոյ և հաճու- թեան քաղաքական ժողովոյ:

Տնտեսական խորհուրդը՝ ազգային երկմտից, կտակոյ և Հիւանդանոցի հոգաբարձութիւններուն նաև թագա- կան խորհուրդներուն մատակարարութեանը վրայ հսկո- ղութիւն պիտի ընէ. և ասոնց ամեն մէկին որոշեալ ժա- մանակներ համար պահանջելով, քաղաքական ժողովոյն պիտի հաղորդէ:

Տնտեսական խորհուրդը տարեկան կրկու ամիս ա- ռաջ՝ յետագայ տարւոյ մէջ ըլլալը հատկին ու ծախսը Երկմտից հոգաբարձութեանն ստուգելով, հաշուեկիւղը պիտի սրտաբաստէ և քաղաքական ժողովոյն ներկայացունէ:

3. ԴԱՏԱՍԱՀԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Յօդ. 47. Վատաստանական խորհուրդը կը բաղկա- նայ ութ իրաւագէտ, և ամուսնացեալ և քառասուն տարին լրացուցած անձերէ, որոց չորսը եկեղեցական և չորսը աշխարհական պիտի ըլլան:

Վատաստանական խորհուրդը նախագահը Պատրիար- քի ժիլիսանորդն է. և անդամներուն բոլորն ալ խառն ժողովոյ կողմէն կը նտրուին՝ քուէից առաւելութեամբ:

Վատաստանական խորհուրդը պաշտօնն է՝ ընտանեկան վէճերը լուծել, և Բարձրագոյն Վրան կողմէն Պատրի- արքարան յանձնուած դատերը՝ յանձնարարութեան համեմատ քննել և որոշել:

Երբ պատահի այնպիսի դատ մը զոր դատաստանա- կան խորհուրդը իր ձեռնհասութենէն վեր դատէ, ըստ

վերջանալուն նշաններ չեն անհունիր առայժմ. այլ ընդհակառակն՝ ըստ ամենայն երեւոյն, տակաւին շատ պիտի երկարի:

ԱՅԳԱՅԻՆ

Վոստանդնուպօլսոյ Մասիս լրագրոյն Մարտի 7 թուոյն մէջ կղերական գայրոյցի մը հիմնադրութեան առաջարկութեանը կը կարգաւորէ. որ ամենահարկաւոր հաստատութիւն մի ըլլալով ազգին համար, կը բարեմաղթեմք ի բոլոր սրտէ որ առանց զանցա- ռեան օր յառաջ ի գործ դրուի:

Լաւառիկ Մասիսին մէջ հրատարակուած յոգ- ուածը յիշեալ կղերական գայրոյցին վրայօք:

«Ինչպէս որ նախընթաց թուով հրատարակուած Կրօնական ժողովոյ պաշտօնական ծանուցումներէն յայտնի է, ազգային Կրօնական ժողովը կղերական բարեկարգ վարձարանի մը կարեւորութիւնը մաս- նաւոր խորհրդաժողութեան նիւթ ընելով, անոր ամեն պիտայն ու եկամուտը ինքնին ծրագրելէ ետեւ՝ հա- մադուար ժողովով վերջնական որոշումը տալ խոս- տացիւ էր:

«Լաւ Կրօնական համագումար ժողովը երբեքարթի- օրը գումարութեանց ազգային պատրիարքարանը ի ներկայութեան ամենապատիւ Ս. Պատրիարք Զօր, ուժ սրբազան արքեպիսկոպոսներու և մայրաքաղա- քիս կղերական դատուն վարդապետաց և քահանայից մեծագոյն մասին:

«Ժողովն իր առաջագրեալ նպատակին վրայ խոր- հրդածելէ և անոր անհրաժեշտ կարեւորութեանը վրայ միաձայն հաւանութիւն տալէ ետեւ, որոշեց նախ որ յառաւի կանոնադրութիւն մը շինուի ձեռ- նարկելիք գայրոյցին վրայ, և անոր ամեն պիտայն կանոնաւոր կերպով հոգալու համար ալ արժան գա- տեց հետեւեալ դումարները պահանջել տարուէ տարի հետագայ տեղերէն:

Գումար	Վանքէն
20000 Մշտ աւարտ Կարապետի	Վանքէն
20000 Երմաշու ուրբ Լատուածածնայ	»
5000 Կեսարիոյ սուրբ Կարապետի	»
5000 Ռօստոմիշի Ս. Թագաւոր	»
3000 Սեբաստիոյ Ս. Նշան	»
3000 Եւգովի Ս. Զօհան ոսկեբերան	»
6000 Տրապիզոնի Ս. Փրկիչ	»
1000 Երզնաւ բարձրահայեաց Ս. Լատուածածնայ	»
500 Մարդուանու Զարիսիան Ս. Լ.	»
20000 Վարդէօմբիկի Ս. Զօհան ոսկեբերան եկեղեցիէն	»

պահանջման խնդրոյն կամ կրօնական կամ քաղաքական և կամ խառն ժողովոյն յանձնաւորն հարկաւորութիւ- նը կը նշուին:

Եթէ դատաստանական խորհուրդ մէջ որոշուած դա- տի մը դէմ բողոքէ դատաւարանաւոր, խնդիր վերադնի կը քննուի յիշեալ ժողովներէն մէկուն մէջ՝ սրտն որ կը վերաբերի:

4. ԳԱՆՕՐԵՒՅ ԽՈՐՀՈՒՐԴ

Յօդ. 48. Վանքերն ազգին սեպտեմբեր ամսուց առաջին ըլլալով, ազգին կը վերադնի անոնց մատակարարու- թեան հատկից ու ծախսից ընդհանուր տեսչութեան և քննութեան իրաւունքը:

Լատուած հարկաւոր է որ ամեն վանք իրեն համար յատուկ կանոններ ունենայ, կեդրոնական Վարչու- թեան կրօնական և քաղաքական ժողովները խառն ժո- ղով կ'աղմկելով, իւրաքանչիւր Վանքի Միարանութեան նաև Վանքից խորհուրդին կ'արձկն տունիէ հոգը, պէտք եղած կանոնադրութիւնը կը պատրաստեն և ազ- զայն ընդհանուր ժողովոյ հաստատուել կուտան:

Սոյն կանոնադրութեանց հիմնաւոր սկզբունքն են. Ս. Իւրաքանչիւր Վանքի մասնաւոր մատակարարու- թիւնը իր միարանութեան կը վերաբերի, և Իսկ ամենուն վրայ ընդհանուր տեսչութիւն ընելու իրաւունքը կ'ըկու- նական Վարչութեան կը վերաբերի, որ կը գործադրէ վանքից խորհուրդին ձեռքը:

Բ. Իւրաքանչիւր Վանքի վանահայրը իր միարանու- թեան կողմէն կը նտրուի, և Կեդրոնական Վարչութեան խառն ժողովոյ հաւանութեամբ Պատրիարքի ձեռք կը հաստատուի:

Վանահայր ըլլալու անձը պէտք է որ երեսունհինգ

10000 Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցիէն	»
1500 Սայր եկեղեցիէն	»
1500 Խաղիկի	»
2000 Պէշիկթաշի	»
1500 Սամթաիոյ	»
2000 Խաղիկաւար Ս. Խաչ եկեղեցիէն	»
1500 Ս. Կարապետ	»
1500 Օրթագիկի Ս. Լատուածածնայ	»
1000 Վալաթիոյ Ս. Լատուածածնայ	»
1000 Վատրիկի եկեղեցիէն	»
1000 Պալատի	»
5000 Խաղիկի ազգային եկամուտներէն	»
5000 Երկապոսի	»

120000 Երուսաղէմայ Ս. Հակոբեանց վանքէն: Տիւրքարանի համար տարուէ տարի տրուած գումարն ալ սոյն գումարէն փոքր մաս մը Ս. Փրկիչի ազգային հիւանդանոցին մէջ պատուարեալ անտէրունչաւոց կը թուութեանը բաժին հանելէ ետեւ, մնացեալը կղե- րական գայրոյցին պիտի ծառայէ:

«Լաւ գումարներէն զատ արդէն այս նպատակաւ Լատուած Զարիսիան Ս. Լատուածածնայ վանքին շնորհաւոր կը լուծուին տրուելու արդիւնքն ալ սոյն գա- րոյցին պիտի գործածուի:

«Կղերական գայրոյցին աշակերտ պիտի ընդունուին նաև ամեն վանքերէ, և ամեն աշակերտները քսան տարեկանէն վար չպիտի ըլլան և նախկին թական ուսմունքնին ալ առած պիտի ըլլան: Գայրոյցին մէջ ըլլալիք բարձր դատաստութիւններն են, Լատուած ծառանութիւն, Իւրաքանչիւր Վանքի, սկզբունք փիլիսո- փայութեան, ընդհանուր պատմութեան եկեղեցու- կան, ընդհանուր պատմութիւն ազգաց, սկզբունք ստոյլ ջապահութեան, լատիններէն, յունարէն, եթ- րայեցիներէն և ուրիշ ամենահարկաւոր ուսմունքներ»:

Ս. Իւրաքանչիւր Վանքի գաղղիներէն տեղեկեալն պե- ղեցիլ յեզուին դատաստութիւնն ևս պիտանի է յոյժ: Եւ եթէ հարկ ըլլայ, երբայցիներէնը հանելու է և անոր տեղ գաղղիներէնը դնելու է. որուն մէջ ե- կեղեցական և բարոյական պատուական գիրքեր կան:

Սովետայի Հիւսիսափայլանուն ազատասէր հան- գէսը՝ զանազան պատճառաց համար, տարի մը չափ գաղարկէ ետեւ, դարձեալ սկսաւ հրատարակ- ուիլ խմբագրութեամբ յարգոյ պարոն Ս. Վալար- եանց բանիբուն գրագէտին, որ կը խոստանայ մե- ծագէս գործակից ըլլալ իւր հայրենակցաց բարոյա- կան և խմբական յառաջադիմութեանը իւր այս աշխատասիրութեանը միջոցաւ:

Յիշեալ գիտնական խմբագրին այս ազգասիրա- կան խոստումը և անձնանուէր ջանքը շնորհակալու-

տարին լրացուցած, և օսմանն անտէր թեան հարատւ վարդապետներէն ըլլայ:

Գ. ԲողոքՎանքերը ազգին բարոյական գործացմանը ծառայելու պարտաւոր են. ուստի ամեն մէկը իր կարո- ղութեան չափով ունենալու է Բնօրհարան, Թանգա- րան, Տպարան, Հիւանդանոց, և ասոնց պէս ուրիշ ազ- զօրու հաստատութիւններ:

Վանքից խորհուրդը կը բաղկանայ 7 անձերէ, զոր քաղաքական ժողովը կը նտրէ քուէից առաւելութեամբ:

Վանքից խորհուրդին պաշտօնն ու պարտաւորու- թիւնն է՝ իւրաքանչիւր վանքի կանոնաց գործադրու- թեանը հսկիլ և վերատեսչութիւն ընել, եկամուտներն և հատկիցները ստուգել, և ծախքերը քննել ու կան- նաւորել:

Վանքից խորհուրդը կը նտրէ վանականներուն մէ- ջէն իւրաքանչիւր Վանքի մատակարարութեան պաշտո- նին համար պէտք եղած անձները: Ստանք՝ վանահօրն նախադատութեամբ և իրենց վանքին յատկացիւղ կա- նոններուն համաձայն Վանքը տնտեսելով, որոշեալ ժա- մանակներ՝ հաշուահամար կուտան վանքից խորհուրդին:

5. ԵԼԵԻՄՏԻՑ ՀՈՐԱԿԱՐԶՈՒԹԻՒՆ

Յօդ. 49. Երկմտից հոգաբարձութիւնը կը բաղկանայ եօթն հաշուագէտ անձներէ. զոր Բաղարական ժողովը կը նտրէ քուէից առաւելութեամբ:

Երկմտից հոգաբարձութեան պաշտօնն է ազգային Կեդրոնական անտէրին տնտեսութիւնն ու համարակա- լութիւնը:

Այս անտէրին մուտքն են՝ ազգային ընդհանուր տուրք՝ Կատանդնուպօլսոյ Պատրիարքարան գիտնատան հա- տկից, և առանց մասնաւոր տեղ մը որոշելու ազգին

Թեան և քաջալերութեան արժանի կը համարուիք, և քաջայայտեմք թէ Հայոց ազգին ուսումնական և լուսաւորեալ մասը լիովին պիտի արդարացնէ Հիւսիսափայլի խմբագրին ակնկալութիւնը՝ զոր ունի աւոր ձեռնադրութեանը վերայ:

Ահաւասիկ այս հանգիսին յարգոյ հրատարակչին յայտարարութիւնը: ուղղեալ առ իւր սիրելի հայրենակիցներն:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հիւսիսափայլը որ, յանձնել է ասել, գրեթէ մի ամբողջ տարի ստիպուած դառնուեցաւ կարճել իւր զործակատարութիւնը, այժմ՝ փանք և պատիւ մի քանի ազնուամիտ և լուսաւոր Հայերի հոգաբարձութեան՝ դարձեալ սկսանում է իւր մատենագրական գործը, որ է, լինել հրատարակած քերական իւր ազգի ցաւի և ուրախութեան, նորանոր դադարաւ ներքի թարգման, եւրոպական գիտութեան և լուսաւորութեան միջնորդ, այն մեծակշիւ ազգային պիտոյքների քարոզող, որ այսօր էլ ունի պարտէ հոգալ հայկական հատարակութիւնը (Խոստատանի մէջ, և թէ կամէր (և պիտի կամենայ) ներկայումս պատրաստել իւր բարոյական և մտաւոր գոյութեան համար մի սին հաստատութեան, այսինքն, մի լուսաւոր և առաքինի սերունդ ապագայ օրերի համար, մի դալոյ ազգ, որ ունէր սիրտ զգալու իւր հայկական պատիւը և անպատկառութիւնը մարդկութեան առջև, որ ունէր միտք հասկանալու թէ մի ազգի մէջ առանձնականի օգուտը և փեսքը անբաժանելի է հասարակաց օգտից՝ մի նոր, ազնիւ, վերածագող հայկական սերունդ:

Հիւսիսափայլի հրատարակողը վերստին ոտք կոխելով մի բարի ձեռնարկութեան շէմքի վերայ, չի կամի անուր նախագուշակութեամբ և անփութ անգիտութեամբ պարտել իւր տեսութեան շրջանակը: Այս կամի սիրող սրտով հաւատալ և յուսալ, որ մեր պատուելի հասարակութիւնը, միտ գնելով իւր յատուկ օգտին և հրաժարուելով անձնական փոքրօրի անհաւան, կը փութայ ձեռնառու գտնուի մի մասն, նադրական գործի, որոյ միակ խորհուրդն է, իւր թեթեւաւոր թերթերի մէջ խօսք ու զրոյց առնել հայկական հասարակութեան հետ նորա կարեւոր և անհակարեւոր պիտոյքների վերայ, թէ իմացական և թէ նիւթական մասին: Ասածել և ուսանիլ պարտաւանդ է ներկայ ժամանակումս ամենայն մարդ և ամենայն ազգ: Այս քաջալերութեամբ, որ Հայք մի արտում բաշտուած լինեն ընդհանուր գեղեցիկ կանոնից: Աշխարհս յառաջ է երթում, գիտութիւնը անաչառ քննորոշութեամբ օրէ օր գուրս է հանում նորանոր ճշմարտութիւնը, հերքում է անցած դարերի մարտութիւնը, ասել լուսափայլ է կայացանում և ար-

անուանը եղած կտակ կամ նուէր: Եւրն են՝ Պատրիարքարանի և զեւանատան սովորական ծախք, Կեդրոնական վարչութեան ձեռքը եղած ազգային հաստատութեանց և կարօտեալ թաղերու տրուելիք նպաստ և դանազան ուրիշ պատահական ծախք:

Եւրմոյց հոգաբարձութիւնը կը հաւարէ ամեն այս հասցիները, և իր ձեռքը կը լինի յիշեալ ծախքերը, միշտ Տնտեսական խորհուրդին գիտութեամբ և Բաղարական ժողովի հաւանութեամբ:

Եւրմոյց հոգաբարձութիւնը պարտաւոր է իր տնտեսական յանձնուած ազգային տնտեսիկ հաշիւը տաւարակարգութեան կանոնաւ կարգադրել, և որոշեալ ժամանակներ հաշուեցուցակ ներկայացնել Տնտեսական խորհուրդին, որ ստուգելով և վաւերացնելով կը հաղորդէ Բաղարական ժողովին:

6. ԿՏԱԿԱՑ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

Յօդ. 50. Կտակաց հոգաբարձութիւնը կը պահանջէ եօթն անձինք, որոց երեքը եկեղեցական և չորսը աշխարհական՝ խառն ժողովով կը նորոշեն քուէից առաւելութեամբ:

Կտակաց հոգաբարձութեան պաշտօնն է՝ ազգային կտակաց տնտեսութիւնը: Իր պարտաւորութիւնն է՝ կտակաց օրինաւոր կերպիւ և կտակարարին նպատակին զիտաւարութեամբ համեմատ գործադրութեանը հսկել:

Կտակաց հոգաբարձութեան համար պէտք եղած մասնաւոր կանոնադրութիւնը՝ խառն ժողովը պիտի պատրաստէ կտակաց հոգաբարձութեան և Տնտեսական խորհուրդին կարծիքն առնելով, և ընդհանուր ժողովը պիտի հաստատէ:

Կարապէս կը լուծէ մարդկային հանձարի արդէն աւորած յայտարարութիւնը: Ոչ մի ազգ չկայ եւրոպայում այս րոպէիս, որ չաշխատէր կամ իմացականապէս, կամ թէ նիւթապէս օգուտ քարել իւր համար այժմեան գիտութեան ճոխ ու բազմամասնայ պողաբութեանից: Հիշաւորը միայն տարբեր է իրի վերայ մի կտակարար անմտութեան և անընարողութեան մէջ, շնչաւորը միայն, անշարժ ու անփոփոխ մնում է միևնոյն աստիճանի վերայ, որ միանգամ գրել է նորան բնութիւնը. բայց մարդս և մարդկային ազգը իւր աստուածներէն բանականութեամբ կոչուած է շինել և զարգարել իւր երկնաւոր բնականային գէտի աստիճանն անվերջ ճգողութեամբ գէտի լաւ և կտակարար, յառաջ տանել իւր հոգեւոր և մարմնաւոր բարին: Ինչ մարդու և ազգի մէջ չկայ յառաջնադարութիւն գէտի արդիւր, գեղեցիկ և բարին, այնպէս չկայ և ոչինչ կենդանական շարժողութիւն. այնպէս մահ է, մեռելութիւն է՝ մի գերեզմանատուն փառած ու նեխած ոսկրներով:

Հրատարակողին քաղցր է հաւատալ և յուսալ թէ, լուսաւորութեան կարիքը մեր ժամանակներում գտնուելով մի անհրաժեշտ բան, մի հարկաւոր կենսական սնունդ իւրաքանչիւր մարդու, մեծ և փոքրի համար, Հայերից ևս կը պատանդն ասելի ջերմութեամբ խնդրող և ընթերցողը նոր նոր գտնածների ոյժման աշխարհաբաւ լեզուով: Հրատարակողին քաղցր է հաւատալ, թէ նորա սիրելի հայրենակիցքը այսուհետեւ թեթեւամտութեամբ և անմտութեամբ իրենցից բաց մեծեւել չեն այն պատուական և ազնիւ բարեքը, որ մեր օրերի եւրոպական գիտութիւնը պատրաստել է մարդկութեան վայելքի համար. որ և հրատարակողը կամի իւր սովորական աշխատասիրութեամբ, հայկական ամանի մէջ ընծալել իւր ազգին: Այս խնդրում և աղաչում միայն որ նորա սիրելի Հայերը մի փոքր ազատ ժամանակ և մի փոքր երկայնամիտ ուշադրութիւն դործ գնեն ընթերցանութեամբ Հիւսիսափայլի թերթերը. որովհետեւ առանց ծանուցիլու տալ ծանր է, անմարսելի քար է ստամոքի համար, բայց ոչ կենսական սնունդ:

Հիւսիսափայլը կը հրատարակուի, ինչպէս յառաջ ամսէ ամիս, իւր տարեկան շրջանը համարելով անցեալ 1863 թուականի Կիւտեմբերից: Օրագրի քանակութիւնը կը լինի 3ից մինչև 4 թերթ մեծ ու թածալ և արտաքին վայելելութեամբ թղթի ու արդարութեան, ինչպէս մինչև այժմ եղել է: Տարեկան գինը հետաւոր քաղաքների համար է 10 մանթ, արծաթ հանգերձ ուղարկմամբ սուրհանդակի ձեռքով, իսկ Սոսկուայի մէջ 8 մանթ 50 կոպ:

Կտակաց հոգաբարձութիւնը որոշեալ ժամանակներ իր պաշտօնին վերաբերեալ հաշիւները պիտի ներկայացունէ Տնտեսական խորհուրդին, որ ստուգելով և վաւերացնելով պիտի հաղորդէ Բաղարական ժողովին:

7. ՀԻՒՄԱՆԻՏԱՐԻՏԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

Յօդ. 51. Հիւսիսափայլի հոգաբարձութիւնը կը պահանջէ ինն անձինք. զոր Բաղարական ժողովը կը նորոշէ քուէից առաւելութեամբ: Առնց երկուքը վկայեալ բովի պիտի ըլլան:

Հիւսիսափայլի հոգաբարձութեան պաշտօնն է՝ ազգային հիւսիսափայլը և անոր սեպական կալուածներն ու եկամուտները տնտեսել, և անոնց հաշիւով ու ազգային տնտեսիկ նպատակը մատակարարել զայն:

Այս հաստատութիւնը չորս շրջանակի բաժնուելով, մի կը՝ աղքատիկ հիւսիսները դարմանելու, երկրորդը՝ ծեր և անկար աղքատները պատասխարելու, երրորդը՝ խեղդարները խնամելու, և չորրորդը՝ որ և անտէր ուղղը դաստիարակելու պիտի յատկանան:

Այս շրջանի կարգադրութիւնն ու տնտեսութիւնը բովիական և առողջապահիկ կանոնաց համեմատ պիտի տնտեսուին:

Հիւսիսափայլի հոգաբարձութիւնը այս հաստատութեան տնտեսութեան մասին Տնտեսական խորհուրդին, և դատարարութեան մասին Ոստանական խորհուրդին պատասխանատու է. և այն խորհուրդը որոշեալ ժամանակներ համար պիտի տայ իր գործողութեանց վրայ:

Պէտք է շարունակել:

Հանգերձ հասուցանելով պատուելի ստացողներին: 20 Յունուարի 1864, ՍՈՍԿՈՒՍ

Ս. Նազարեանց:

Համբաւարեր Խոսիոյ պատուական լրագրէն քաղելով կիմանամք, թէ բուն Խոսաստանի մէջ բնակող Հայք ընդամենը 48,898 հոգի են. որոնք հետեւեալ ինը դաւառաց մէջ կը բաժնուին:

1. Ասորականութեան դաւառը	5185
2. Պէտարապոյի	2106
3. Եկատերինասլայի	16774
4. Սոսկուայի	232
5. Բեդեքպուրիայի	166
6. Ստաւրոպոլի	18154
7. Կարիոյ	3800
8. Խեթսոնի	1526
9. Չերնամորեան Խաղախների երկրի մէջ	945

48898

Այս տեղեկութիւնները պէտք է որ ճիշտ ըլլան, ըստորում ներկայ 1864 տարին 'ի լոյս ընծայուած Բեդեքպուրիական ուսուցէն օրացոյցէն առնուած են. որուն համեմատ բուն Խոսաստանի մէջ Խոսաց դաւանութիւնը ունեցող ժողովրդը թիւը 53,659,108 է, Հոռմէական կրօնին հետեւող ժողովրդեան թիւը 2,915,133 է. որուն մէջ կը բաժնուին 12,289 հոռմէական Հայք, Եկատերական 1, Եկատերականաց և բարեկարգեալ (բեթորմէ) բողոքականաց թիւը 1,911,204 է, Հեթայք 1,430,643 հոգի են. Բարայիմները 5,984 հոգի են, Սահմէականաց թիւը 1,940,890 է, Լամայիները և կուպաշանքը 468,483 հոգի կը համարուին, յորոց 230,606 կուպաշա են:

Վերջիշեալ լրագրոյն 57 և 58 թերթերուն մէջ նաեւ հետեւեալ ազգային լուրերը կը կարգաւորէ:

Օրոշուողաբար գերապատիւ Եփեսոսի վարդապետան Լիւթանան՝ որ փեթերպոլիի Հայոց եկեղեցեաց սրբազան պաշտօնէից մինն է, և տեղութեան զինուորականութեան ճեմարանաց մէջ կրօնաւորաց վարժապետ, վարժատրեցաւ 'ի վեհափայլ Կաթողիկոսէն եպիսկոպոսական բանակէի:

Վարձեալ արժանապատիւ Տ. Գրիգոր աւագ քահանայ Տ. Գրիգորեանց, որ նշնապէս Ս. փեթերպոլիի Հայոց եկեղեցեաց սրբազան պաշտօնէից մինն է, վարժատրուեցաւ 'ի Կորին վեհափայլութեան Լանջական ակադեմիոյ խաչի:

Հոգաբարձուն Լազարեան ճեմարանի Լեւեւեան լեզուաց և Հայոց եկեղեցեաց երկուց մայրաքաղաքաց՝ ներքին խորհրդական վեհապետ Ս. Յովակիմեան Լազարեանց՝ նուիրեց Սոսկուայի կայսերական բնազնական ընկերութեան հարկը արծաթ ուրբի:

Սոսկուայի կայսերական բնազնական ընկերութիւնն ընտրեց իւրեան Գործունեաց Լնդամ գնեքին խորհրդական Յովհաննէս Վաթեան Գեւորեանց՝ որ հոգաբարձու է փեթերպոլիեան ուսումնարանական Շրջանակի:

Հետեւեալ ազգը յուղարկեցաւ մեզի հրատարակութիւն:

Աղքատաւորաց ընկերութիւնը կը ծանուցանէ հասարակութեան որ Պուճայի կայարանը ունեցած իւր սրճանոցը վիճակահանութեամբ պահող 82 թիւը եթէ մինչ Սպրիլ 20 չներկայանայ, իրաւունքը զրկուած է:

ԱՌԱՋՆՈՐԴ ԽՕՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Այս պատուական գրքուկին հեղինակն է մեծարգոյ մօսիս Ն. Մալուք բազմամուտ գրագետը, որ զարարած է գլիշեալ Խօսակցութիւնը երեք լեզուաւ. այսինքն գաղղիերէն, անգղիերէն և արաբերէն: Արաբերէնին առջեւ արտասանութիւնն էս պրոսած է գաղղիական տառերով:

Այս Առաջնորդը խօսակցութեան մեծ ծառայութիւններ պիտի մատուցանէ ճանապարհորդաց և վաճառականաց, որոնք Ասորեաց և եգիպտոսի մեծ ճանապարհորդութիւններ կը գնեն: Այս տեսակ նոր հրատարակութիւն մի չկայ, որ յիշեալ երկու երկիրներուն գաւառական լեզուաւ շարադրուած ըլլայ. ուստի տարակապ ջանքով քի յօժարամտութեամբ են սիրով պիտի քննարկուին այս օգտակար աշխատասիրութիւնը:

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՇԱԼՈՒՄՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ